

Դուրսն ողկոյզներն յասմիկին
 Կը թափէին մուրճին մէն մի թընդիւնէն
 Փեղկերն ի վար իրենց կապոյտ ծաղիկներ:
 Եւ քանդակեց, քանդակեց,
 Եւ քանդակեց, քանդակեց.
 Մինչեւ որ բիրտ վայրենութիւնը քարին
 Նըւաճուեցաւ, եւ ահա գլուխ մը կնոջ
 Մարմարին մէջ թարմօրէն
 Ծաղկեցաւ բա՛րձըր շուշանի մ'հանգունակ:
 Չըքնաղ էր ան, միանգամայն էր ահեղ.
 Յելլենական արձաններու կուրուրթամբ
 Կը յառէին խորունկ աչքերն՝ որոնց մէջ
 Կարծես հոգին, անդունդն ի վեր մագըլցող
 Կարիճի պէս՝ կամաց կամաց կ'երեւնար:

Եւ քանդակեց, քանդակեց,
 Եւ քանդակեց, քանդակեց...
 Բանաստեղծն իր բազուկին տակ կենադրոջմ
 Կը փորագրեր կարծես քերթուած մ'ահաւոր.
 Խոր ծալքերուն մէջ կեանք առնող մարմարին
 Մէն մի հարուած դաշնակութիւն մ'էր քնարի,
 Յանգ մ'էր, տուն մ'էր, եւ կամ էր շէշտ մ'օղասլաց:
 Մէն մի հարուած ռըմբագոռ
 Ըմբոստ երգ մ'էր ոսկի մուրճով երգըւած՝
 Որուն Աստուած երկընքին մէջ կ'ունկընդդէր:
 Եւ քանդակեց, քանդակեց,
 Եւ քանդակեց, քանդակեց,
 Ու աւասիկ ճոխ գանգուրներն այդ կընոջ
 Չերդ ողկոյզներ իրար խըռնուած օճերու
 Ուսերուն վրայ թափեցան:
 Կերտեց թիկունքն եւ թիկնամէշըն շըքեղ,